ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 07.05.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2021/106

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«Ջիարջի» ՍՊԸ-ի տնօրեն Է. Փոթոյանի (պետական ռեգիստրի գրանցման վկայական՝ թիվ 273.110.1156506),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 26.04.2021թ. թիվ 26/26-1/6331-2021 գրությամբ «Ջիարջի» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Թիվ 19 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի 23.04.2021թ. թիվ 191 գրության հիման վրա 26.04.2021թ. թիվ 26/26-1/6331-2021 գրությամբ նախաձեռնել է «Ջիարջի» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Ջիարջի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Ջիարջի» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

««Ջիարջի» ՍՊԸ-ն մասնակցել է «Թիվ 19 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի կողմից հայտարարած թիվ Թ19ՊՈԼ-ԳՀԱՊՁԲ-ԱՍ-21/4 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին և 12.02.2021թ-ին կնքել է թիվ Թ19ՊՈԼ-ԳՀԱՊՁԲ-ԱՍ-21/4-3 պայմանագիրը:

Պայմանագիրը ուժի մեջ է մտել 16.02.2021թ-ին կնքված Համաձայնագիր 1-ով:

Համաձայն պայմանագրի գնման ժամանակացույցի՝ Ապրանքների մատակարարումը Վաճառողի կողմից իրականացվում է սույն Պայմանագիրը կնքելուց հետո ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած 6 ամսվա ընթացքում ընկած ժամանակահատվածում, փուլային, յուրաքանչյուր անգամ: Ապրանքի (կամ դրա մի մասի)՝ առաջին խմբաքանակի մատակարարումը Գնորդը չի կարող պահանջել ավելի շուտ քան պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 օրացուցային օրում, ընդ որում սահմանված ժամկետի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից՝ բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է պայմանագիրը կատարել ավելի կարճ ժամկետում: Այնուհետև, մատակարարումները պետք է իրականացվեն ըստ փաստացի պատվերների՝ ոչ ուշ քան 3 աշխատանքային օրվա ընթացքում:

Ապրանքի մատակարարումը՝ բեռնափոխադրումը, բեռնաթափումը և տեղափոխումը մինչև համապատասխան պահեստ, իրականացվում է Կատարողի ուժերով և միջոցներով ՀՀ, ք. Երևան, 0084, Անդրանիկի փող., 5/9 շենք հասցեով՝ «Թիվ 19 պոլիկլինիկա» ՓԲԸ:

Ապրանքի/ների մատակարարաման համար պատվերը Գնորդի կողմից Վաճառողին կատարվում է բանավոր, կամ գրավոր: Գնորդի կողմից առաջին պատվերը ստացվել է 2021թ-ի մարտի 22-ին, պատվերի ֆայլում նշված է մատակարարման վերջնաժամկետը՝ "Մատակարարման վերջնաժամկետ՝ ըստ պայմահագրի գնման ժամանակացույցի (30.06.2021թ.):

Կից ներկայացնում ենք /2 ֆայլ/:

Նույնիսկ եթե պատվերի մեջ նշված չլիներ մատակարարման վերջնաժամկետը, գնորդը իրավունք չուներ պահմանագիրը լուծարելու ըստ պայմանագրի 2.1.7.1 կետի, քանի որ

համաձայն պայմանագրի 2.1.7.1. կետի վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավել:

Եթե պատվերի տրման օրին գումարում ենք 20 օրացուցային օր, համաձայն պայմանագրի գնման ժամանակացույցի և 10 օր համաձայն պայմանագրի 2.1.1 և 2.1.7.1 կետերի ապա կստանանք այն, որ պայմանագրի խախտումը էական կհամարվի 2021թ-ի ապրիլի 21-ից հետո միայն, այնինչ գնորդը պայմանագիրը լուծում է ապրիլի 20-ին և լուծարման մասին գրությունը նույն օրը ուղարկում է մեր կազմակերպության էլ. փոստին: Այստեղից պարզ է դառնում, որ գնորդի գործողությունները դուրս են պայմանագրի պահանջներից և որ գնորդը ապրիլի 20-ին իրավունք չուներ միակողմանի լուծել պայմանագիրը:

Որպես հավելում նշենք, որ ապրանքների մի մասի հրատապ չմատակարարելու պատճառ է եղել այն, որ մեր կազմակերպության բեռները մոտ մեկ ամիս մնացել էին Ռուսաստանի և Վրաստանի սահմանին Լարսի անցակետը փակ լինելու պատճառով:

Հաշվի առնելով վերոնշյալ փաստերը, խնդրում ենք Ձեզ չբավարարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից նախաձեռնած ընթացակարգը և «ՋԻԱՐՋԻ» ՍՊԸ-ին չներառել Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

Ընկերության տնօրենը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/106 ընթացակարգի շրջանակներում քննության նպատակով 30.04.2021թ. ժամը 10:05-ին հրավիրված նիստի վերաբերյալ, մասնակցել է նիստին և պնդել վերը շարադրված դիրքորոշումը:

3. <u>«Թիվ 19 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Թիվ 19 պոլիկլինիկա» ՓԲԸ-ն (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 23.04.2021թ. թիվ 191 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հիմք ընդունելով «Թիվ 19 պոլիկլինիկա» ՓԲԸ և «Ջիարջի» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կատարող) միջև 12.02.2021թ. կնքված N Թ19ՊՈԼ-ԳՀԱՊՁԲ-ԱՍ-21/4-3 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 2.1.7.1 կետի բ) ենթակետի պահանջները՝ Պատվիրատուն միակողմանի մասնակի լուծել է «Ջիարջի» ՍՊԸ-ի հետ 12.02.2021թ.

կնքված պետության կարիքների համար ապրանքի մատակարարման թիվ Թ19ՊՈԼ-ԳՀԱՊՁԲ-ԱՍ-21/4-3 պայմանագիրը:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ վերոնշյալ պայմանագրի լուծման վերաբերյալ գրությունը 21.04.2021թ. միաժամանակ ուղարկվել է Կատարողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և նույն օրը հրապարակվել է www.procurment.am (www.gnumner.am) հասցեով ինտերնետային կայքում:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետը՝ դիմում ենք Ձեզ «Ջիարջի» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ գործընթաց նախաձեռնելու նպատակով՝ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/106 ընթացակարգի շրջանակներում 30.04.2021թ. ժամը 10:05-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/106 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/106 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Թիվ 19 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի և «Ջիարջի» ՍՊԸ-ի միջև 12.02.2021թ. կնքվել է «Թ19ՊՈԼ-ԳՀԱՊՁԲ-ԱՍ-21/4-3» ծածկագրով պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. Պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, սահմանվել է հետևյալը.

«Ապրանքների մատակարարումը /բացթողումը/ վաճառողի կողմից իրականացվում է սույն պայմանագիրը կնքելուց հետո ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած 6 ամսվա ընթացքում ընկած ժամանակահատվածում, փուլային, յուրաքանչյուր անգամ: Ապրանքի (կամ դրա մի մասի)՝ առաջին խմբաքանակի մատակարարումը Գնորդը չի կարող պահանջել ավելի շուտ քան պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 օրացուցային օրում, ընդ որում սահմանված ժամկետի հաշվարկը կատարվում պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից՝ բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է պայմանագիրը կատարել ավելի կարճ ժամկետում: Այնուհետև մատակարարումները պետք է իրականացվեն ըստ փաստացի պատվերների՝ ոչ ուշ քան 3 աշխատանքային օրվա ընթացքում»:

3. «Թիվ 19 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի և «Ջիարջի» ՍՊԸ-ի միջև 16.02.2021թ. կնքվել է 12.02.2021թ. թիվ «Թ19ՊՈԼ-ԳՀԱՊՁԲ-ԱՍ-21/4-3» պայմանագրի վճարման ժամանակացույցը հաստատելու մասին N 1 համաձայնագիրը:

4. «Ջիարջի» ՍՊԸ-ին 22.03.2021թ. «Թիվ 19 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի կողմից ներկայացվել է ապրանքների մատակարարման պահանջ, համաձայն որի՝ որպես մատակարարման վերջնաժամկետ սահմանվել է 30.06.2021թ.:

5. «Ջիարջի» ՍՊԸ-ին ուղղված 20.04.2021թ. ծանուցմամբ Պատվիրատուն հայտնել է հետևյալը.

««Թիվ 19 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի և «Ջիարջի» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կատարող) միջև 12.02.2021թ. կնքված N Թ19ՊՈԼ-ԳՀԱՊՁԲ-ԱՍ-21/4-3 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) և դրա հիման վրա 16.02.2021թ. կնքված Համաձայնագրի N1-ի համաձայն՝ վերջինս պետք է 22.03.2021թ. ներկայացված պահանջագրով 3 աշխատանքային օրվա ընթացքում «Թիվ 19 պոլիկլինիկա» ՓԲԸ-ին մատակարարեր՝ 8-րդ չափաբաժնով 3000 դեղահատ «Լոզարտան հիդրոքլորոթիազիդ 100 մգ+25մգ», 9-րդ չափաբաժնով 3000 դեղահատ «Լոզարտան 100մգ», 10-րդ չափաբաժնով 2500 դեղահատ «Պանտոպրազոլ 20մ», 26-րդ չափաբաժնով 25 հատ «Սալմետերոյ+Ֆլուտիկազոն 50մկգ/250մկգ (60 դեղաչափ)», 30-րդ չափաբաժնով 2500 դեղապատիճ «Խոլեկալցիֆերոլ 1000ՄՄ», 32-րդ չափաբաժնով 3000 դեղահատ «Կալցիում վիտ Դ3 500մգ», 35-րդ

չափաբաժնով 6200 դեղահատ «Ատորվաստատին կալցիում 40մգ», սակայն առ այսօր չի մատակարարել:

Հիմք ընդունելով վերոնշյալ պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետի պահանջները՝ «Թիվ 19 պոլիկլինիկա» ՓԲԸ-ն 2021թ. ապրիլի 20-ին վերոնշյալ չմատակարարված ապրանքների մասով միակողմանի մասնակի լուծում է «Թ19ՊՈԼ-ԳՀԱՊՁԲ-ԱՍ-21/4-3» պայմանագիրը և համաձայնագիրը՝ համապատասխանաբար, պատշաճ ծանուցումը ապահովելու նպատակով կիրառել է ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով դրույթները»:

6. Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում 21.04.2021թ հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 26.04.2021թ. թիվ 26/26-1/6331-2021 գրությունը, «Թիվ 19 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի 23.04.2021թ. թիվ 191 գրությունը և կից փաստաթղթերը, Ընկերության կողմից ներկայացված դիրքորոշումը և կից փաստաթղթերը, ինչպես նաև գործում առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի

միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (հետայսու նաև՝ Օրենսգիրք) 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար ***<u>պատասխանատու է մեղքի առկայության դեպքում</u>***, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի համաձայն՝

1. ***<u>Եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը</u>***: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը

դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

2. Սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Պայմանագրի 2.1.7 ենթակետի համաձայն՝ ***<u>Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը</u>***, եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.1.7.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում,

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

Այսպես, «ԹԻՎ 19 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի և «Ջիարջի» ՍՊԸ-ի միջև 12.02.2021թ. կնքվել է «ԹԻ19ՊՈԼ-ԳՀԱՊՁԲ-ԱՍ-21/4-3» ծածկագրով պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, սահմանվել է հետևյալը.

«Ապրանքների մատակարարումը /բացթողումը/ վաճառողի կողմից իրականացվում է սույն պայմանագիրը կնքելուց հետո ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած 6 ամսվա ընթացքում ընկած ժամանակահատվածում, փուլային, յուրաքանչյուր անգամ: Ապրանքի (կամ դրա մի մասի)՝ առաջին խմբաքանակի մատակարարումը Գնորդը չի կարող պահանջել ավելի շուտ քան պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 օրացուցային օրում, ընդ որում սահմանված ժամկետի հաշվարկը կատարվում

պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից՝ բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է պայմանագիրը կատարել ավելի կարճ ժամկետում:Այնուհետև, մատակարարումները պետք է իրականացվեն ըստ փաստացի պատվերների՝ ոչ ուշ քան 3 աշխատանքային օրվա ընթացքում»:

«Թիվ 19 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի և «Ջիարջի» ՍՊԸ-ի միջև 16.02.2021թ. կնքվել է 12.02.2021թ. թիվ «Թ19ՊՈԼ-ԳՀԱՊՁԲ-ԱՍ-21/4-3» պայմանագրի վճարման ժամանակացույցը հաստատելու մասին N 1 համաձայնագիրը:

«Ջիարջի» ՍՊԸ-ին 22.03.2021թ. «Թիվ 19 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի կողմից ներկայացվել է ապրանքների մատակարարման պահանջ, համաձայն որի՝ որպես մատակարարման վերջնաժամկետ սահմանվել է 30.06.2021թ.:

«Ջիարջի» ՍՊԸ-ին ուղղված 20.04.2021թ. ծանուցմամբ Պատվիրատուն հայտնել է հետևյալը.

««Թիվ 19 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի և «Ջիարջի» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կատարող) միջև 12.02.2021թ. կնքված N Թ19ՊՈԼ-ԳՀԱՊՁԲ-ԱՍ-21/4-3 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) և դրա հիման վրա 16.02.2021թ. կնքված Համաձայնագրի N1-ի համաձայն՝ վերջինս պետք է 22.03.2021թ. ներկայացված պահանջագրով 3 աշխատանքային օրվա ընթացքում «Թիվ 19 պոլիկլինիկա» ՓԲԸ-ին մատակարարեր՝ 8-րդ չափաբաժնով 3000 դեղահատ «Լոզարտան հիդրոքլորոթիազիդ 100 մգ+25մգ», 9-րդ չափաբաժնով 3000 դեղահատ «Լոզարտան 100մգ», 10-րդ չափաբաժնով 2500 դեղահատ «Պանտոպրազոլ 20մ», 26-րդ չափաբաժնով 25 հատ «Սալմետերոյ+Ֆլուտիկազոն 50մկգ/250մկգ (60 դեղաչափ)», 30-րդ չափաբաժնով 2500 դեղապատիճ «Խոլեկալցիֆերոլ 1000ՄՄ», 32-րդ չափաբաժնով 3000 դեղահատ «Կալցիում վիտ Դ3 500մգ», 35-րդ չափաբաժնով 6200 դեղահատ «Ատորվաստատին կալցիում 40մգ», սակայն առ այսօր չի մատակարարել:

Հիմք ընդունելով վերոնշյալ պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետի պահանջները՝ «Թիվ 19 պոլիկլինիկա» ՓԲԸ-ն 2021թ. ապրիլի 20-ին վերոնշյալ չմատակարարված ապրանքների մասով միակողմանի մասնակի լուծում է «Թ19ՊՈԼ-ԳՀԱՊՁԲ-ԱՍ-21/4-3» պայմանագիրը և համաձայնագիրը՝ համապատասխանաբար, պատշաճ ծանուցումը ապահովելու նպատակով կիրառել է ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն

որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով դրույթները»:

Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում 21.04.2021թ հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

Անդրադառնալով Ընկերության կողմից վկայակոչված այն հանգամանքին, որ Գնորդի կողմից առաջին պատվերը ստացվել է 2021թ-ի մարտի 22-ին, պատվերի ֆայլում որպես մատակարարման վերջնաժամկետ նշվել է 30.06.2021թ.՝ հարկ եմ համարում ևս մեկ անգամ արձանագրել հետևյալը.

Պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, սահմանվել է հետևյալը.

«Ապրանքների մատակարարումը /բացթողումը/ վաճառողի կողմից իրականացվում է սույն պայմանագիրը կնքելուց հետո ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում ***<u>կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած 6 ամսվա ընթացքում ընկած ժամանակահատվածում, փուլային, յուրաքանչյուր անգամ</u>***: Ապրանքի (կամ դրա մի մասի)՝ առաջին խմբաքանակի մատակարարումը Գնորդը չի կարող պահանջել ավելի շուտ քան պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 օրացուցային օրում, ընդ որում սահմանված ժամկետի հաշվարկը կատարվում պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից՝ բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է պայմանագիրը կատարել ավելի կարճ ժամկետում: ***<u>Այնուհետև, մատակարարումները պետք է իրականացվեն ըստ փաստացի պատվերների՝ ոչ ուշ քան 3 աշխատանքային օրվա ընթացքում»:</u>***

Պայմանագրի 2.1.7 ենթակետի համաձայն՝ ***<u>Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը</u>***, եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.1.7.1 ենթակետի բ) պարբերության համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, ***<u>եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:</u>***

<u>Այսինքն՝ Պատվիրատուն, մի կողմից Պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, սահմանելով, որ մատակարարումները պետք է իրականացվեն ըստ փաստացի պատվերների՝ ոչ ուշ, քան 3 աշխատանքային օրվա ընթացքում, մյուս կողմից պահանջ ներկայացնելիս Ապրանքների մատակարարման N</u>

1 պահանջագրի մեջ որպես մատակարարման վերջնաժամկետ նշելով 30.06.2021թ., որոշակի անհստակություն է առաջացրել և հիմք հանդիսացել Ընկերության կողմից մատակարարման վերջնաժամկետի տարընկալման:

Այսպիսով՝ գտնում եմ, որ Ընկերության կողմից Պայմանագրով ստանձնած պարտավորության խախտելը պայմանավորված է եղել Պատվիրատու կողմից Պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, որպես մատակարարման այլ ժամկետ, իսկ 22.03.2021թ. N 1 պահանջագրով մեկ այլ ժամկետ սահմանելով, որպիսի պայմաններում Ընկերությունն կարող էր ողջամտորեն ենթադրել, որ պահանջագրով ներկայացված ապրանքները պետք է մատակարարվեն մինչև ***30.06.2021թ.:***

Վերոգրյալ փաստական հանգամանքների ուժով գտնում եմ, որ Ընկերության՝ վերը շարադրված հանգամանքերում դրսևորած վարքագիծը չի կարող հանգեցնել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պատասխանատվության:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 26.04.2021թ. թիվ 26/26-1/6331-2021 գրությամբ «Ջիարջի» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**